

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱՅԻ

ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ



ՏԵՂԵԿԱՆՔ

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման
դեպքերի վերաբերյալ



2022 թվական
(ԶԼՄ մշտադիտարկման արդյունքների ամփոփում)

2023 թ.

Տեղեկանքը պատրաստվել է «Ոստիկանության հետ հարաբերություններում քաղաքացիների իրավունքների պաշտպանության արդյունավետության բարձրացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի կողմից Նորվեգիայի հելսինկյան կոմիտեի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակին են և հնարավոր է չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Շապիկի նկարի աղբյուր՝ ptotolure.am կայք

Նկարագրություն՝ ոստիկանության ծառայողները ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի մոտ

Կազմեց՝ Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ԱՄՓՈՓԱԳԻՐ	6
2022 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՅՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	11
2022 թ. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՅՐԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ	12
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՉԱՓ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄ, ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ, ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ, ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՍՈՏԵՑՈՒՄ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ	13
ԱՆՀԱՄԱՉԱՓ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ	13
ԱՆՀԱՄԱՉԱՓ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ	14
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ` ՋՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՍՄԱՄԲ ԲՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՅՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ԵՌԱԲԼՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՆՈՒՄ	15
ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆԻՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ	16
ԱՆՉԱՓԱՀԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ	17
ԱՌԱՆՑ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ	18
ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ	19
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ	20
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂ, ԱՌԱՆՑ ԶԵՆՔԻ ՀԱՎԱՔՆԵՐ` ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄԸ	22
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ	24
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ	25
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՅԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ	27
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	27
2022 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ	30
ՀԱՎԵԼՎԱԾ. ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանը	35

«...ներքին անվտանգություն ասելով մենք չենք հասկացել երբեք ու երբևէ չենք հասկանալու քաղաքացիների իրավունքների և ազատությունների սահմանափակում, ընդդիմության գործունեության սահմանափակում և այդպես շարունակ...»
ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյան,
26.01.2019 թ.

Մենք ասում էինք, որ մերժում ենք բռնությունը՝ որպես ներհայաստանյան որևէ հարցի, այդ թվում՝ քաղաքական հարցերի լուծման միջոց: Մենք ասում էինք, որ նույնիսկ ամենակոռումպացված, հանցավոր պաշտոնյայի, իշխանության դեմ չենք պատրաստվում բռնություն գործադրել:
ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ելույթը ՀՀ ԱԺ-ում,
12.02.2019 թ.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Չնայած վարչապետի՝ քաղաքականության մեջ բռնությունը մերժելու և քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները սահմանափակող գործողությունները բացառելու մասին հայտարարություններին՝ ՋԼՄ մշտադիտարկման արդյունքները հակառակի մասին են փաստում:

Սույն տեղեկանքն ամփոփում է 2022 թ. Հայաստանում ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերն ինչպես հավաքների և հանրային այլ միջոցառումների ժամանակ, այնպես էլ անհատական բնույթի:

Համադրելով ՋԼՄ հրապարակումները, Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակի հայտարարությունները, ինչպես նաև Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) ստացած ահազանգերն ու դիմումները՝ կարող ենք փաստել, որ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը շարունակական և համակարգային բնույթ են կրում, սակայն պատասխանատու մարմինների՝ այդ դեպքերը կանխելու, իսկ տեղի ունենալու դեպքում մեղավորներին պատասխանատվության ենթարկելու գործողությունները կամ բացակայում են կամ պատշաճ չեն ներկայացվում հանրությանը:

Հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը, ուղիղ եթերների հնարավորությունը՝ լրատվամիջոցների հրապարակումները ծառայում են հուսալի սկզբնաղբյուր և ոստիկանության գործողությունները հնարավորինս օբյեկտիվորեն գնահատելու արդյունավետ գործիք:

Թերևս այս դիտարկումը մեծապես վերաբերում է հավաքներին և այլ հանրային ակցիաներին: Այս առումով նշենք, որ անհատական բնույթի դեպքերի դիտարկումը պակաս կարևոր չէ ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների հնարավոր խախտումները զսպելու և կանխարգելելու տեսանկյունից: Ըստ այդմ, չափազանց կարևոր է ՋԼՄ-ների դերակատարությունը նաև մարդու իրավունքների անհատական բնույթի դեպքերի լուսաբանման հարցում, ինչը կնպաստի հնարավոր չարաշահումները, խախտումները կանխելուն ու Հայաստանի քաղաքացիների ապահովվածության ու վստահության մակարդակը բարձրացնելուն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը հավաքագրելու նպատակով մշտադիտարկվել են 15 առցանց լրատվամիջոց (ընտրանքը կատարվել է 2015 թ.-ին), ինչպես նաև ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքէջը և Մարդու իրավունքների պաշտպանի ֆեյսբուքյան էջը¹:

Պետք է նկատի ունենալ, որ 2022 թ., ինչպես և նախորդ 2021 թ.-ը, աչքի է ընկել քաղաքական բնեռացվածության բարձր մակարդակով, որն անխուսափելիորեն արտացոլվել է տարբեր քաղաքական ուժերի հետ ասոցացվող կամ նույնականացվող ԶԼՄ-ների հրապարակումներում:

Դեպքերն առանձնացվել և վերլուծվել են լրատվամիջոցների տարածած տեղեկատվության հիման վրա, որի հավաստիության համար պատասխանատվություն են կրում տարածող լրատվամիջոցները: ՀՔԱ Վանաձորի գրասենյակը չի կատարել հրապարակումներում ներկայացվող փաստերի ճշտում:

Արձանագրված դեպքերը բաժանվել են երկու պայմանական խմբի՝ հավաքների ժամանակ կամ դրանց մասնակցելու արդյունքում տեղի ունեցած դեպքեր և անհատական բնույթի դեպքեր: Հավաքների մեջ ներառվել են բոլոր հանրային միջոցառումները՝ ցույց, նստացույց, երթ և այլն:

Տեղեկանքում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտում են համարվել ոչ միայն փաստացի բերման ենթարկելու դեպքերը, այլև բոլոր այն դեպքերը, երբ անձը թեկուզ օրենքով սահմանված կարգով է բերման ենթարկվել ոստիկանության բաժին, սակայն պահվել է ոստիկանությունում սահմանված 3 ժամից ավել, ինչպես նաև անհիմն և ապօրինի բերման ենթարկելու փորձերը:

Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտումները ներկայացված և դասակարգված են՝ հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով ամրագրված մարդու իրավունքների ցանկը: Առանձին խախտում է դիտարկվում մասնագիտական խմբերի (գլխավորապես լրագրողների) գործունեության խոչընդոտումը՝ ոստիկանության ծառայողների գործողությունների բովանդակությունը հնարավորինս հստակ փոխանցելու և տեսանելի դարձնելու նպատակով:

Իրավունքների վերաբերյալ դիտարկումներում ներառված են ինչպես ըստ կոնկրետ իրավունքի խախտման դեպքերը, այնպես էլ դիտարկվող իրավունքի խախտման հետ զուգորդված այլ իրավունքների խախտումները:

Սույն մեթոդաբանության արդյունավետությունն ապացուցվել է նաև արտակարգ և ռազմական դրությունների պայմաններում:

¹ Մշտադիտարկված լրատվամիջոցներն են՝ www.aravot.am, www.armlur.am, www.galatv.am, www.azatutyun.am, www.lin.am, www.168.am, www.armtimes.am, www.hraparak.am, www.epress.am, www.lragir.am, www.ilur.am, www.news.am, www.hetq.am, www.alplus.am, www.factor.am, www.police.am, <https://www.facebook.com/KristinneGrigoryan>

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայաստանում քաղաքացիների նկատմամբ ոստիկանական բռնությունները, մարդու իրավունքների ու ազատությունների անհամաչափ սահմանափակումները ոչ միայն չեն վերացել, այլ նման դեպքերը 2022թ շեշտակի աճել են:

ԶԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է մարդու իրավունքների խախտման **199 դեպք**: Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերի թիվն աճել է **20.1 %-ով (կամ 40 դեպքով)**, իսկ հետհեղափոխական 2019 թ. համեմատությամբ՝ **54.8 %-ով (կամ 109 դեպքով)**:

Հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի թիվն 2022 թ. 2021 թ.-ի համեմատությամբ աճել է **47.8 %-ով (կամ 94 դեպքով)**, իսկ 2019 թ.-ի համեմատությամբ՝ **72.8 %-ով (կամ 131 դեպքով)**: Այսպիսով, 2022 թ. ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը կրկնակի անգամ, իսկ հավաքների ընթացքում՝ ավելի քան երեք անգամ գերազանցել են հետհեղափոխական ամենացածր ցուցանիշը: Ավելին, խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքների խախտման տոկոսային հարաբերակցությունը խախտման ընդհանուր դեպքերի նկատմամբ ամենաբարձրն է մշտադիտարկվող 8 տարիների ընթացքում: 2022 թ.-ին նախորդ տարվա համեմատ կրկնապատկվել են առողջության իրավունքի խախտման դեպքերը՝ արձանագրելով վատագույն արդյունքը 8 տարիների ընթացքում: Թվային տվյալների առավել մանրամասն ամփոփումը ներկայացված է [«2022 թ. ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի թվային ամփոփում»](#) վերնագրի ներքո:

Ավելին, ոստիկանության ծառայողների գործողությունները տարեց տարի ավելի անկանխատեսելի են դառնում: Մասնավորապես՝ 2022 թ. ապրիլի 25-ից ընդդիմությունն անհնազանդության ակցիաներ սկսեց՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով: Ակցիաներն ուղեկցվեցին ոստիկանության ծառայողների կողմից անհիմն ու անհամաչափ ուժի կիրառմամբ, առանց իրավական հիմքերը ներկայացնելու անձանց ազատությունից զրկմամբ, քաղաքացիների առողջությանը վնասի պատճառմամբ, գույքի վնասմամբ, անչափահասների նկատմամբ ուժի կիրառմամբ և ազատությունից զրկմամբ, լրագրողների գործունեության խոչընդոտմամբ և նրանց նկատմամբ ուժի կիրառմամբ, քաղաքացիական հագուստով, դիմակավորված, առանց որևէ տարբերանշանի անձանց ներգրավմամբ հավաքների վայրերում, որոնք բռնություն էին կիրառում մասնակիցների նկատմամբ, նրանց բերման ենթարկում: Ընդ որում, ոստիկանության ապօրինի գործողությունները գովաբանվում և արդարացվում են պաշտոնատար անձանց կողմից: **Նշենք, որ դիմակավորված անձանց ներգրավումը հավաքների վայրերում թերևս հետհեղափոխական Հայաստանում դարձել է օրինաչափություն, մինչդեռ անընդունելի է առանց տարբերանշանի ոստիկանության ծառայողների ծառայության իրականացումը և առավել ևս քաղաքացիական հագուստով և դիմակավորված անձանց գտնվելը հավաքների իրականացման վայրում, որը հանդիսանում է օրենքի խախտում:**

2022 թ. աննախադեպ էր անչափահասների նկատմամբ ոստիկանության անօրինական ու անհամաչափ գործողությունների տեսանկյունից: Նվազագույն հաշվարկով 10 օրվա ընթացքում բերման ենթարկվեց ավելի քան 15 անչափահաս անձ, հաճախ անհամաչափ ուժի կիրառմամբ. մեկ անչափահասի մոտ արձանագրվել են մարմնական վնասվածքներ, իսկ երկուսը ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվել են ծեծի և արժանապատվությունը նվաստացնող վերաբերունքի: Անչափահասների իրավունքների խախտումներն առավել մանրամասն ներկայացված են [«Անչափահասների իրավունքների խախտումները ոստիկանության գործողությունների արդյունքում»](#) ենթավերնագրի ներքո:

Քաղաքացիների նկատմամբ բռնություն է կիրառվել նույնիսկ այն դեպքում, երբ նրանք փաստացի գտնվել են ոստիկանության ծառայողների «ձեռքերում» և որևէ դիմադրություն ցույց տալ չէին կարող (օրինակ՝ ոստիկանության ձառայողը [բռնիցքով մի քանի անգամ հարվածել է](#) իր գործընկերների կողմից բերման ենթարկվող քաղաքացու գլխին): Ոստիկանության կողմից նաև հատուկ միջոցներ (ծխարձակող և լուսաձայնային նոնակներ) կիրառվեցին քաղաքացիների նկատմամբ:

Մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ բազմաթիվ էին իրավիճակները, երբ ոստիկանության ծառայողները չեն վերահսկել իրենց: Նրանք [տրվում էին սադրանքների](#), վիրավորում, [փողոցային բառապաշարով խոսում](#) ակցիայի մասնակիցների հետ, հրում նրանց, վնասում գույքը (ավտոմեքենան), մինչդեռ ոստիկանական համազգեստը պարտավորեցնում է նրանց մնալ իրենց իրավասությունների սահմաններում և գործել բացառապես օրենքի պահանջներին համապատասխան:


Ոստիկանության ծառայողները՝ Ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների հետ «պաշտպանեցին» Ռուսաստանի Դաշնության դեսպանությունը ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի խաղաղ ցուցարարներից: Վերջիններիս խախաղ հավաքներ անցկացնելու իրավունքը խոչընդոտվեց պատճառաբանությամբ, որ նրանք Հայաստանի քաղաքացի չեն: **Արձանագրենք, որ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը Հայաստանում չպետք է սահմանափակվի և չպետք է պայմանավորված լինի ազգային պատկանելիությամբ կամ քաղաքացիությամբ:** Դեպքերն մանրամասն ներկայացված են [«Ռուսաստանի դաշնության քաղաքացիները, Ռուսաստանի Դաշնության դեսպանատունը և խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտումը»](#) ենթավերնագրի ներքո:

Ինչպես փաստում են ՄԻՊ [հրապարակումները](#), բազմաթիվ էին նաև ոստիկանության բաժիններում ընթացակարգային խախտումները (անձանց չէին ներկայացվում իրենց նվազագույն իրավունքները, չէին ապահովվում լռելու, հեռախոսազանգ կատարելու և այլ իրավունքներ) ու հակաօրինական գործողությունները (օրինակ՝ քաղաքացիական հագուստով ոստիկանության ծառայողները բջջային հեռախոսով լուսանկարել են անձանց ոստիկանության բաժին մտցնելիս): Հրապարակումների ամփոփ արդյունքները ներկայացված են [«Մարդու իրավունքների խախտումները ոստիկանության բաժիններում»](#) ենթավերնագրի ներքո:

Հավաքների ընթացքում 12 դեպքում խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը, ինչը [կրկնակի անգամ ավել է 2021 թ. ցուցանիշից](#): Ընդ որում, լրագրողների և օպերատորների նկատմամբ բռնի ուժ է կիրառվել, այդ թվում դիմակավորված անձանց և բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ ՊՊԾ պետ Սարգիս Հովհաննիսյանի կողմից: Հատկանշական է, որ վերջին դեպքն ուսումնասիրվեց ՀՀ Քննչական կոմիտեում և որոշում կայացվեց [քրեական գործ հարուցելը՝ հանցակազմի բացակայության հիմքով մերժելու մասին](#)՝ Սարգիս Հովհաննիսյանի գործողություններն արդարացնելով հեռախոսային խոսակցությունների գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքով: Նշվեց, որ լրագրողը պետք է դադարեցներ նկարահանումը նման պահանջ ստանալուց հետո: Հարկ ենք համարում հիշեցնել իրավապահ համակարգի ներկայացուցիչներին և մասնավորապես ՊՊԾ պետ Սարգիս Հովհաննիսյանին և ՀՀ քննչական կոմիտեին, որ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելն [արգելված է օրենքով](#): Ավելին, ՊՊԾ պետը գտնվում էր հավաքի վայրում, լրագրողի հարցն էլ անձնական բնույթի չէր, այլ վերաբերում էր ընթացող հավաքին, իսկ պետական մարմինների ծառայողների անհարգալից վերաբերմունքը, բռնությունը քաղաքացիների, ինչպես նաև լրագրողների նկատմամբ, ենթակա է պատասխանատվության: Լրագրողների գործունեության խոչընդոտման դեպքերը մանրամասն ներկայացված են [«Ոստիկանության գործողությունների արդյունքում լրագրողների գործունեության խոչընդոտման դեպքերը»](#) ենթավերնագրի ներքո:

Հաջորդիվ ներկայացված գծապատկերն արտացոլում է ոստիկանության ծառայողների կողմից խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, առողջության և արդար դատաքննության իրավունքների խախտումների՝ 2021 և 2022 թթ. թվային համեմատականը:

Գծապատկեր 1. Ոստիկանության ծառայողների կողմից խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու, անձնական ազատության և անձեռնմխելիության, ֆիզիկական բռնությունից զերծ մնալու, առողջության և արդար դատաքննության իրավունքների խախտման դեպքերի թիվը 2021 և 2022 թթ. -ին



Ինչպես երևում է գծապատկերից, եթե 2021թ.-ին այս 5 իրավունքների խախտման ընդհանուր 262 դեպք էր արձանագրվել, ապա 2022 թ.-ին՝ 476: Ընդ որում, բոլոր իրավունքներով

խախտումներն ավելացել են 40-50 %-ով: Այս թվերը, և մասնավորապես ուստիկանության ծառայողների գործողությունների արդյունքում քաղաքացիների առողջության իրավունքի խախտման դեպքերի կրկնապատկումը վկայում են ուստիկանության ծառայողների գործողությունների ոչ իրավաչափության և միաժամանակ իրավապահ համակարգում անպատժելիության մթնոլորտի խորացման մասին:

Հատկանշական է, որ Ազգային ժողովի (ԱԺ) քաղաքական մեծամասնությունը գովաբանել է ուստիկանության գործողությունները՝ չնայած դրանց հակաօրինական, ոչ իրավաչափ բնույթին: Մասնավորապես ԱԺ «Իմ քայլը» խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանը ֆեյսբուքյան գրառմամբ [շնորհակալություն է հայտնել ուստիկանությանը](#) պրոֆեսիոնալ աշխատանքի համար, իսկ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, խմբակցության մեդիա պատասխանատու [Արթուր Հովհաննիսյանի գնահատմամբ](#). «...իրավապահ համակարգը **պատվով** կատարում էր հասարակական կարգը պահպանելու իր առջև դրված պարտականությունները և գործում էր **համաչափ**»: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ուստիկանության գործողությունները համարել է [«ընդհանուր առմամբ համաչափ»](#):

Նման գնահատականներն անհասկանալի ու անընդունելի են: Օր.՝ 5 ուստիկանի կողմից բերման ենթարկվող քաղաքացու զլխին բռնակցով մի քանի անգամ հարվածելը, մեկ այլ քաղաքացուն կոտրվածք հասցնելը, անչափահասին ահաբեկելը չեն կարող իրավաչափ ու համաչափ համարվել: Ավելին, դրանք քրեորեն պատժելի արարքներ են: Բացի դրանից՝ հակաօրինական է քաղաքացիական հագուստով և դիմակավորված անձանց ներգրավումը հավաքներին: Ավելին, բարձրաստիճան պետական պաշտոնյաների՝ իրականությանը չհամապատասխանող գնահատականները չեն նպաստում իրավապահ համակարգի բարեփոխմանը և խաթարում են իրավապահ համակարգում պատասխանատվության և հաշվետվողականության սկզբունքների պահպանումը, հանրային վստահության ձևավորումը թե՛ իրավապահ մարմինների, թե՛ նման գնահատականներ հնչեցնողների հանդեպ:

Նման գնահատականները նպաստում են նաև անպատժելիության պահպանմանը, որի գագաթնակետը դարձան 2022 թ. սեպտեմբերի 21-ի դեպքերը, երբ, ոտնահարելով օրինականության բոլոր նորմերը, ուստիկանության ծառայողները, բռնի ուժ կիրառելով, արժանապատվությունը նվաստացնող ձևով բերման ենթարկեցին Եռաբլուրում գտնվող զոհված զինծառայողների հարազատներին: Թե՛ն [նախաձեռնվեց քրեական վարույթ](#) պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով, մինչև 2022 թ. դեկտեմբերը քննչական կոմիտեն չէր կարողանում նույնականացնել լիազորությունները չարաշահած ուստիկանության ծառայողներին և այդ պատճառով որևէ մեկը որպես մեղադրյալ չէր ներգրավվել: Ավելին՝ [ուստիկանությունը դիմեց դատարան](#)՝ բերման ենթարկված ծնողներին վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով: Դեպքի վերաբերյալ մանրամասները ներկայացված են [«Ուստիկանության ծառայողների՝ զոհված զինծառայողների ծնողների նկատմամբ բռնությունները և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը Եռաբլուր զինվորական պանթեոնում»](#) ենթավերնագրի ներքո:

Համակարգում հակաօրինական գործողությունները ոչ միայն պատշաճ քննության չեն ենթարկվում, մեղավորները չեն նույնականացվում և պատասխանատվության չեն ենթարկվում, այլև նման արարքները կարծես թե խրախուսվում են, բռնություն գործադրող ոստիկանության ծառայողները ոչ միայն չեն հեռացվում համակարգից, այլև ունենում են ծառայողական առաջխաղացում:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2022 թ. ընթացքում ՋԼՄ հրապարակումների հիման վրա մի քանի հաղորդում է ուղարկել ՀՀ գլխավոր դատախազություն, որոնց հիման վրա հարուցվել են քրեական գործեր: Մասնավորապես՝ 2022 թ. մարտի 25-ին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մոտ խաղաղ ակցիայի մասնակիցներին ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների, ինչպես նաև 2022 թ. ապրիլի 25-ից ՀՀ-ում մեկնարկած անհնազանդության ակցիաների ընթացքում ցուցարարների և լրագրողների նկատմամբ ոստիկանության բռնությունների դեպքերով ՀՔԱ Վանաձորի գրասենյակը [հանցագործության մասին 9 հաղորդում է ներկայացրել](#), որոնց հիման վրա 2 քրեական գործ է հարուցվել:

Կազմակերպությունը նաև ՋԼՄ **98 հրապարակումներում**, ինչպես նաև Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի հրապարակումներում արձանագրված խախտումների քննության ընթացքի վերաբերյալ հարցում ուղարկեց ՀՀ ոստիկանություն: Ի պատասխան ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունից 2022 թ. դեկտեմբերի 29-ին տրամադրեցին **26 հրապարակման** վերաբերյալ տեղեկություն (ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանն ամբողջությամբ տե՛ս [Հավելվածում](#)), որոնցից միայն **մեկի դեպքում** է ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվել կարգապահական տույժ «Նկատողություն» ձևով: **19-ի դեպքում** ծառայողական քննությունը կասեցվել է մինչև քրեական վարույթի ավարտը, **մեկ դեպքում** պարեկային ծառայողի նկատմամբ տույժ չի կիրառվել «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի հիմքով², **հինգ դեպքով** ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, մյուս **72 հրապարակումների** վերաբերյալ իրականացվում են ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար: Պատասխանատվության խնդիրն ներկայացված է [«Պատասխանատվության սկզբունքը համակարգում»](#) վերնագրի ներքո:

Ինչ վերաբերում է անհատական բնույթի խախտման դեպքերին, ապա դրանց վերաբերյալ հանրության իրազեկվածության մակարդակը կտրուկ նվազել է: 2022 թ. անհատական բնույթի դեպքերից մեկը Ոստիկանության Արաբկիրի բաժնում քանդակագործ Էդուարդ Վանեսքեհյանի խոշտանգման դեպքն էր: Հատկանշական է, որ ՀՀ քննչական կոմիտեն հարկ համարեց

² Հոդված 16. Կարգապահական տույժ չկիրառելը՝

1. Ծառայողական քննություն նշանակող անձի որոշմամբ կարգապահական խախտում կատարած ոստիկանության ծառայողը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, կամ կարգապահական խախտում կատարած ոստիկանության ծառայողն անկեղծորեն զղջացել է, ներողություն է խնդրել կոլեկտիվից կամ տուժողից կամ կամավոր հատուցել է իրավախախտմամբ պատճառված վնասը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164928>

[մեկնաբանություն հրապարակել](#) դեպքը տեղի ունենալուց միայն 20 օր հետո: Ավելին, համաձայն քննչական կոմիտեի [մեկնաբանության](#), դեպքի հաջորդ օրը՝ նոյեմբերի 20-ին, ՀՀ ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջին չենթարկվելու և առերևույթ բռնություն գործադրելու հիմքով հանրային քրեական հետապնդում հարուցվեց Է. Վանեսքեհյանի նկատմամբ, և [տուժող ճանաչվեց հինգ ոստիկան](#): Միաժամանակ Է.Վանեսքեհյանի նկատմամբ խոշտանգման վերաբերյալ նոյեմբերի 19-ին փաստաբանի ներկայացրած հաղորդման հիման վրա միայն 3 օր անց քրեական վարույթ նախաձեռնվեց: Ավելին, 2022 թ.դեկտեմբերի 9-ի դրությամբ որևէ քննչական գործողություն կատարված չէր: Դեպքին հանգամանակից [անդրադարձել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը](#) «Մեդիա կենտրոն»-ում ասուլիսի ժամանակ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հետևողական է լինելու ՋԼՄ հրապարակումներում արձանագրված դեպքերի քննության ընթացքին:

2022 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

2022 թ. ՋԼՄ-երի հրապարակումներով արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտմանը հանգեցրած 19 անհատական բնույթի դեպք: Հիմնականում խախտվել են արդար դատաքննության իրավունքը՝ 11 դեպք, անձնական ազատության և անձեռնմխելիության և ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքները՝ 10-ական դեպք, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունքը՝ 5 դեպք, առողջության իրավունքը՝ 4 դեպք: Խախտվել են նաև ազատ տեղաշարժվելու, իրավաբանական օգնություն ստանալու, խոսքի ազատության և կարծիքն ազատ արտահայտելու, սեփականության իրավունքները:

Անհատական բնույթի 19 դեպքերից 15-ը տեղի են ունեցել քաղաք Երևանում, 2-ը՝ Շիրակի մարզում և մեկական դեպք՝ Լոռու և Կոտայքի մարզերում:

Դեպքերից մեկը վերաբերում է Ոստիկանության Արաբկիրի բաժնում քանդակագործ Էդուարդ Վանեսքեհյանի խոշտանգմանը: Հատկանշական է, որ ՀՀ քննչական կոմիտեն հարկ համարեց [մեկնաբանություն հրապարակել](#) դեպքը տեղի ունենալուց միայն 20 օր հետո: Ավելին, դեպքը տեղի ունենալու հաջորդ օրը՝ նոյեմբերի 20-ին, համաձայն քննչական կոմիտեի [մեկնաբանության](#), ՀՀ ոստիկանության աշխատակիցների օրինական պահանջին չենթարկվելու և առերևույթ բռնություն գործադրելու հիմքով հանրային քրեական հետապնդում հարուցվեց Է. Վանեսքեհյանի նկատմամբ, և [տուժող ճանաչվեց հինգ ոստիկան](#): Միաժամանակ Է.Վանեսքեհյանի նկատմամբ խոշտանգման վերաբերյալ նոյեմբերի 19-ին ստացված փաստաբանի հաղորդման հիման վրա միայն 3 օր անց նախաձեռնվեց քրեական վարույթ: Ավելին, 2022 թ.դեկտեմբերի 9-ի դրությամբ որևէ քննչական գործողություն չէր կատարվել: Դեպքին

հանգամանալից [անդրադարձել է ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախագահ Արթուր Սաքունցը](#) «Մեղիա կենտրոն»-ում ասուլիսի ժամանակ:

Նշենք, որ իրավապահ համակարգի նման վերաբերմունքը խոշտանգման հնարավոր դեպքին, ինչպես նաև միայն մամուլում լայն հրապարակումներից հետո ՀՀ քննչական կոմիտեի կողմից դեպքի վերաբերյալ մեկնաբանության հրապարակման փաստը հիմք են տալիս մեկ անգամ ևս եզրակացնելու, որ ոստիկանության ծառայողների կողմից ապօրինի գործողությունները, խոշտանգման դեպքերը պատշաճ չեն քննվում, իսկ մեղավորները համարժեք պատասխանատվության չեն ենթարկվում: Ոստիկանության ապօրինի գործողությունները, բռնության դեպքերը չստանալով պատշաճ իրավական գնահատական՝ հանգեցնում են համակարգում անպատժելիության մթնոլորտի խորացմանը:

Մեկ դեպքում էլ ոստիկանական համակարգի անգործության հետևանքով խախտվեց անձի կյանքի իրավունքը: Դեպքն ընտանեկան բռնությանը և իրական վտանգին իրավապահ համակարգի՝ պատշաճ չարձագանքելու հետևանք է: Չնայած ծեծի, սպառնալիքների, այդ թվում զենքով սպառնալիքի վերաբերյալ կնոջ կողմից ոստիկանությանը ներկայացված բազմաթիվ դիմումների՝ ոստիկանությունում դեպքը կանխելու որևէ գործողություն չձեռնարկվեց: Արդյունքում ամուսինը դպրոցի բակում [տնակով պայթեցրեց իրեն և իր նախկին կնոջը](#):

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):

2022 թ. ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՄ ԴՐԱՆՑ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱԽՏՄԱՆԸ ՀԱՆԳԵՑՐԱԾ ԴԵՊՔԵՐԻ ԱՍՓՈՓՈՒՄ

2022 թ. հավաքների և բողոքի ցույցերի ընթացքում արձանագրվել է ոստիկանության գործողությունների հետևանքով մարդու իրավունքների խախտման 180 դեպք:

Առավել մեծ թվով խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը՝ 155 դեպք (86.1 %): Խախտվել են նաև անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը՝ 136 դեպք (75.6 %), ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 116 դեպք (64.4 %), առողջության իրավունքը՝ 24 դեպքում (13.3 %), ազատ տեղաշարժվելու, արդար դատաքնության, իրավաբանական օգնություն ստանալու, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու, սեփականության, խոսքի ազատության և կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքները:

12 դեպքում խոչընդոտվել է լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը, ինչը [կրկնակի անգամ ավել է 2021 թ. ցուցանիշից](#):

180 դեպքերից 169-ը գրանցվել են Երևանում, 3-ական դեպք՝ Արարատի, Գեղարքունիքի և Լոռու մարզերում, մեկական դեպք Արագածոտնի և Արմավիրի մարզերում:

Հաշվետու ժամանակահատվածում գրանցված դեպքերը՝ ըստ խախտված իրավունքի առավել մանրամասն հասանելի են [հետևյալ հղմամբ](#):

*ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՆՀԱՄԱՉԱՓ ՌԻԺԻ ԿԻՐԱՌՈՒՄ,
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ, ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ, ՀԱՏՈՒԿ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ, ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ ՍՈՏԵՑՈՒՄ, ԸՆԹԱՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ*

2022 թ. ապրիլի 25-ից ընդդիմությունն անհնազանդության ակցիաներ սկսեց, որոնց ակտիվությունը պահպանվեց մինչև հունիսի առաջին տասնօրյակը: Ակցիաներն ուղեկցվեցին ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառմամբ, առանց իրավական հիմքերը ներկայացնելու անձանց ազատությունից զրկմամբ, քաղաքացիների առողջությանը վնասի պատճառմամբ, գույքի վնասմամբ, անչափահասների նկատմամբ ուժի կիրառմամբ և ազատությունից զրկմամբ, լրագրողների գործունեության խոչընդոտմամբ և նրանց նկատմամբ ուժի կիրառմամբ:

Ոստիկանության ծառայողների կողմից բերման ենթարկելու դեպքերը կրել են համատարած կամայական, ոչ իրավաչափ բնույթ, բերման են ենթարկվել նաև բողոքի ակցիաներին չմասնակցող անձինք: Անձանց բերման են ենթարկել նույնիսկ մայրերից, այգիներից, այսինքն ոչ նրա համար, որ անձը, օրինակ, փակել է ճանապարհը կամ խոչընդոտել է երթևեկությունը: Ապրիլի 25-ից մայիսի 30-ը ոստիկանության բաժիններ բերման է ենթարկվել ավելի քան 1000 անձ:

*ԱՆՀԱՄԱՉԱՓ ՌԻԺԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՋԵՐԾ ՄՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԽԱԽՏՈՒՄ*

Համատարած բնույթ են կրել անհամաչափ ուժի կիրառման դեպքերը: Օր.՝ 2022 թ. **մայիսի 2-ին** Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով խաղաղ երթերն ու ակցիաները ցրելիս ոստիկանության ծառայողը բռնկեցով մի քանի անգամ [հուժքու հարվածեց բերման ենթարկվող քաղաքացու գլխին](#):



Աղբյուրը՝ [news.am](#)

Մայիսի 3-ին տեսագրություն տարածվեց ՁԼՄ-ներով, որում երևում է, որ կարմիր բերատավորը մի քանի անգամ [բռնկեցով հուժկու հարվածներ հասցրեց](#) ոստիկանության մեքենայի դռնից բռնված քաղաքացու ձեռքին:

[Արձանագրվել են](#) նաև ոստիկանության ծառայողների կողմից քաղաքացիներին բերման ենթարկելիս կոկորդին սեղմելու, գլուխը հատակին հարվածելու, մեքենայի մեջ նետելու,

արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ օգտագործելու, հայհոյելու, թքելու դեպքեր:



Աղբյուրը՝ 168.am և photolure.am

Հատկանշական է, որ ոստիկանության ծառայողների կողմից բռնություն է կիրառվել նաև այն ժամանակ, երբ անձն արդեն բերման էր ենթարկվում, այսինքն դիմադրելու հնարավորություն չունէր: Օր.՝ ոստիկանության ծառայողը հետապնդելով արդեն իսկ բերման ենթարկվող անձին՝ մի քանի անգամ [հարվածեց նրա գլխին](#), մեկ այլ դեպքում ոստիկանության ծառայողը [սեղմում էր անձի կոտրված ձեռքը](#): Ընդ որում, ինչպես նշում է անձը, «երբ նրանց ասացի, որ ձեռքս վիրավոր է, նրանցից մեկն ասաց . «գրողին թե վիրավոր չես»:

ԱՆՀԱՄԱՋՍՓ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՆՏՈՒՄ

Ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառման մասին են փաստում նաև բազմաթիվ քաղաքացիների մոտ մարմնական վնասվածքները՝ ընդհուպ մինչև կոտրվածքներ: Նման դեպքեր [արձանագրվել են](#) նաև ՄԻՊ կողմից:

Օրինակ՝ [կողոսկրի կոտրվածք էր ստացել](#) ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի անդամ, ՀՀ ԱԺ նախկին պատգամավոր Սուրեն Մանուկյանը: Ոստիկանները Սուրեն Մանուկյանին գցեցին գետնին, նրանցից մեկը ոտքերով հարվածեց, իսկ մյուսը ծունկը դրեց Ս. Մանուկյանի գլխին, որից հետո հարվածների տարափի տակ նա բերման ենթարկվեց Ոստիկանության Շենգավիթի բաժին,

այնուհետև՝ շտապ օգնության մեքենայով տեղափոխվեց «Էրեբունի» բժշկական կենտրոն: Հետազոտության ժամանակ պարզվեց, որ նա ստացել էր կողոսկրի կոտրվածք:

2022 թ. մայիսի 3-ին ոստիկանության ծառայողները «Դիմադրություն» շարժման հայրենադարձ մասնակից Կարապետ Հայրապետյանին բիրտ ուժի կիրառմամբ [բերման ենթարկվելիս կոտրել են ուսր](#): Այդուհանդերձ, նրան անմիջապես չտեղափոխեցին բուժօգնման, փոխարենը երկու ժամ պահեցին ոստիկանության բաժանմունքում, ինչից հետո միայն տեղափոխեցին շտապ օգնության հիվանդանոց ու ցուցաբերեցին բժշկական օգնություն:

[Արձանագրվել է դեպք](#), երբ քաղաքացին ոստիկանության կողմից բերման ենթարկվելիս ստացավ ձեռքի փակ վնասվածք: Ավելին, ինչպես նշվում է ՄԻՊ հայտարարության մեջ, թեև Ոստիկանությունը զանգահարեց շտապօգնության ծառայություն, սակայն քաղաքացու ձեռքի վնասվածքի ախտորոշման և բուժման հետագա ընթացքը, ըստ Ոստիկանության և շտապօգնության աշխատակիցների դիրքորոշման, պետք է կատարվեր քաղաքացու միջոցների հաշվին:

***ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ՝ ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱՍՏԱՅՆՈՂ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
ԵՌԱԲՆՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ***

Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ և բարոյականության սահմանը հատող գործողությունների կիզակետն էր Եռաբլուր զինվորական պանթեոնի դեպքը: 2022 թ. սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առավոտյան, վարչապետ Նիկոլ Փաշինյանի այցին ընդառաջ ոստիկանության ծառայողները, բռնի ուժ կիրառելով, բերման ենթարկեցին զոհված զինծառայողների հարազատներին: Ոստիկանության ծառայողներն իրենց անօրինական գործողություններով մարմնական վնասվածքներ, առողջությանը վնաս պատճառեցին պանթեոնի տարածքում կանգնած, նստարաններին նստած քաղաքացիներին: Այդ օրը ոստիկանության ծառայողների ակնհայտորեն անհարգալից, արժանապատվությունը նվաստացնող, անհիմն գործողությամբ բերման ենթարկվեց 37 քաղաքացի: Բերման ենթարկված քաղաքացիների նկատմամբ բաժիններում կազմվեցին վարչական իրավախախտման մասին արձանագրություններ:

Միջադեպի առնչությամբ 35 ՀԿ-ներ, այդ թվում՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը, սեպտեմբերի 22-ին հանդես եկան [դատապարտող հայտարարությամբ](#), որում նշվեց, որ անընդունելի է Հայաստանի ոստիկանության ղեկավարության կողմից քաղաքացիների նկատմամբ ապօրինի ուժային գործողություն կատարելու հրամանների արձակումը և կատարումը: Իսկ պետության պաշտպանության համար զոհված զինծառայողների ընտանիքի անդամների նկատմամբ բռնություն կատարելու և ազատությունից ապօրինի զրկելու հրամանների արձակումը նաև հատում է բարոյականության բոլոր շեմերը: Այս հայտարարությամբ ՀԿ-ները պահանջեցին ոստիկանապետի հրաժարականը:

Միաժամանակ ՀՀ ոստիկանությունը [հայտարարություն տարածեց](#)՝ նշելով, որ սեպտեմբերի 21-ին ոստիկանության ծառայողները Եռաբլուրի զինվորական պանթեոնում

կազմակերպված միջոցառումների ժամանակ իրականացրել են իրենց գործառությանին պարտականությունները, ինչի ընթացքում տարածքից ոստիկանություն են բերվել քաղաքացիներ: Նշվեց, որ «Ոստիկանության պետի հանձնարարությամբ այդ գործողություններն ուսումնասիրվում են, և հանրությունը կիրազեկվի արդյունքների մասին»:

Նշենք, որ սեպտեմբերի վերջին [նախաձեռնվեց քրեական վարույթ](#) ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով, այն է՝ պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելը կամ լիազորություններն անցնելը, որը կատարվել է բռնություն գործադրելով: Այնուամենայնիվ, մինչև 2022 թ. դեկտեմբերը Քննչական կոմիտեն չէր կարողանում նույնականացնել լիազորությունները չարաշահած ոստիկանության ծառայողներին և այդ պատճառով որևէ մեկը որպես մեղադրյալ ներգրավված չէր: Ավելին, [Ոստիկանությունը դիմեց դատարան](#), բերման ենթարկված ծնողներին վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով:



Աղբյուրը՝ U1+ և Փաստինֆո

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանցագործության մասին հաղորդում ներկայացրեց միջադեպից ժամեր անց՝ news.am լրատվական կայքի [էդ տականորդ որդուս շիրիմը չի պղծելու. գոհվածի մոր ինքնազգացողությունը վատացավ բերման ենթարկվելիս](#) հրապարակման հիման վրա: Տեսանյութում երևում է, թե ինչպես են կարմիրբերետավորներն ուժ կիրառելով բերման ենթարկում որդեկորույս մորը՝ ուշադրություն չդարձնելով անգամ նրա ինքնազգացողության վատացմանը, որից հետո կինը ուշագնաց է լինում: Ոստիկանները շարունակեցին իրենց բռնի գործողությունները նաև դրանից հետո: Դատախազությունից կազմակերպությանը տեղեկացրեցին, որ դեպքի առնչությամբ քրեական վարույթ է նախաձեռնվել սեպտեմբերի 23-ին, իսկ [ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հաղորդումը](#) վարույթին է կցվել սեպտեմբերի 27-ին:

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՆՁԵՌՆԵՐԻ ՌԻՏԵԼԻՌԻԹԵԱՆ ԽԱՄՏՈՒՄԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

Ոստիկանության ծառայողները բռնություն են գործադրել նաև ԱԺ պատգամավորների նկատմամբ, բերման ենթարկել և [փորձել բերման ենթարկել](#) նրանց: Մասնավորապես՝ 2022 թ. **ապրիլի 27-ին** կառավարության շենքի առաջ մի խումբ երիտասարդներ «Հայաստան» խմբակցության անդամներ Թադևոս Ավետիսյանի ու Քրիստինե Վարդանյանի հետ ակցիա են

իրականացրել: Նրանք դույլով կարմիր ներկ էին բերել կառավարության դիմաց՝ հայտարարելով, որ այն խորհրդանշում է վարչապետ Նիկոլ Փաշինյանի «արյան ծարավը»: Պատգամավոր Թադևոս Ավետիսյանը ձեռքերը թաթախելով կարմիր ներկով լի դույլի մեջ՝ դրանք տպում էր գետնին: Ոստիկանությունը [գետնին տապալեց ընդդիմադիր պատգամավորին](#) և տեղափոխեց ոստիկանական մեքենա:

2022 թ. մայիսի 17-ին ոստիկանության ծառայողները փորձեցին բերման ենթարկել ԱԺ պատգամավոր Արծվիկ Մինասյանին: Նրան նախ [բռնի ուժի գործադրմամբ, արժանապատվությունը նվաստացնող ձևով](#) նստեցրեցին ոստիկանության մեքենան, այնուհետև նույն ձևով հանեցին մեքենայից և ասացին «գնա»: Ընթացքում լսվում է, թե ինչպես է կարմիր բերատավորներից մեկը ասում «հետ հանեք»:



Աղբյուրը՝ *news.am*

2022 թ. մայիսի 30-ին Կառավարության 3-րդ մասնաշենքի մուտքի մոտ ոստիկանության ծառայողները ֆիզիկական ուժ, [խեղդող հնարք կիրառեցին](#) ԱԺ պատգամավոր Արամ Վարդևանյանի նկատմամբ, իսկ Հաղթանակի կամրջի մոտ ակցիայի ժամանակ ուժի գործադրմամբ փորձեցին նրան բերման ենթարկել:

Հիշեցնենք, որ ԱԺ պատգամավորներն օգտվում են անձեռնմխելիությունից: Նրանք չեն կարող գրկվել ազատությունից, և ինչպես նրանց բերման ենթարկելը կամ դրա փորձը չեն կարող հիմնավոր լինել, այնպես էլ նրանց նկատմամբ այդ ընթացքում ուժի գործադրումը չի կարող ներկայացվել որպես անհրաժեշտ ու համաչափ միջոց: Այսինքն, ոստիկանության գործողություններն ակնհայտ հակաօրինական ու ոչ իրավաչափ էին:

ԱՆՀԱՓԱՀԱՄԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՎՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը 2015 թ.-ից իրականացնում է Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի ԶԼՄ մշտադիտարկում, և 2022 թ. աննախադեպ էր անչափահասների նկատմամբ ոստիկանության անօրինական ու անհամաչափ գործողությունների առումով:

Նվազագույն հաշվարկով 10 օրվա ընթացքում բերման ենթարկվեց ավելի քան 15 անչափահաս անձ, հաճախ անհամաչափ ուժի կիրառմամբ, մեկ անչափահասի մոտ արձանագրվել են մարմնական վնասվածքներ, իսկ երկուսը ոստիկանության ծառայողների կողմից ենթարկվել են ծեծի և արժանապատվությունը նվաստացնող վերաբերման: Մասնավորապես՝

- ապրիլի 27-ին Ոստիկանության բաժիններ [բերման ենթարկվեցին 5 անչափահաս անձինք](#), որոնցից մեկը մինչև 16 տարեկան
- ապրիլի 28-ին Ոստիկանության բաժիններ [բերման ենթարկվեցին 7 անչափահաս անձինք](#), որոնցից մեկը՝ 13 տարեկան: Ըստ երեխաների և այլ ականատեսների հայտնած տեղեկությունների՝ 13 տարեկան երեխան մեքենա է նստեցվել ոստիկանության 4 ծառայողների, իսկ մյուսները՝ 4-6 ծառայողների կողմից: Ընդ որում, 13 տարեկան երեխային մեքենա նստեցնելու պահին հավաքի մասնակիցներից ոմանք ոստիկանության ծառայողներին տեղեկացրեցին երեխայի տարիքի մասին, սակայն այս հանգամանքը հաշվի չառնվեց



- մայիսի 5-ին Ոստիկանության մի քանի ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառմամբ [բերման ենթարկվեց ակնհայտորեն անչափահաս անձը](#)

Աղբյուրը՝ *livenews.am*

- մայիսի 6-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կենտրոնի բաժնում Հաղթանակի կամրջի մոտից բերման ենթարկված 16 տարեկան անձի մոտ արձանագրվեցին [մարմնական վնասվածքներ](#), որոնք, ըստ վերջինիս պնդման, առաջացել են Ոստիկանության կողմից անհամաչափ ուժի կիրառման արդյունքում: Ըստ այդ անձի՝ բերման ենթարկելիս ոստիկանների գործողությունների արդյունքում կոտրվել է նաև իր ականցը
- մայիսի 18-ին Ոստիկանության Երևան քաղաքի վարչության Կ. Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի պահպանության բաժնում արձանագրվեց ոստիկանության ծառայողների կողմից [2 անչափահաս անձանց ծեծելու և հայհոյելու դեպք](#):

ԱՌԱՆՑ ՏԱՐԲԵՐԱՆՇԱՆԻ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱԳՈՒՍՏՈՎ ԱՆՁԱՆՑ ՆԵՐԳՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Շարունակական բնույթ է կրում ոստիկանության կողմից քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հավաքներին, որոնք հրահանգներ են տալիս ոստիկանության ծառայողներին, մասնակցում են անձանց բերման ենթարկելու գործողություններին, բռնություն են կիրառում ակցիաների մասնակիցների նկատմամբ: Օր.՝ 2022 թ. **ապրիլի 17-ին** Ազատության հրապարակում հավաքի տեսագրության առաջին բոլեներին երևում է [քաղաքացիական հագուստով անձ, որը](#) ոստիկանության ծառայողներին «շղթա՝ դեմքով դեպի են կողմ» հրահանգ տվեց, իսկ հաջորդիվ շղթա կազմած ոստիկանության ծառայողները խոչընդոտեցին մի խումբ անձանց ազատ տեղաշարժը:

Մեկ այլ դեպքում՝ մի խումբ քաղաքացիներ 2022 թ. **հունիսի 11-ին** Արարատի մարզում բողոքի ակցիա էին իրականացնում այն վայրում, որտեղով պետք է անցնեի Փաշինյանի ավտոշարասյունը, սակայն ոստիկանները բիրտ ուժ կիրառելով քաղաքացիներին հեռացրեցին ճանապարհից: Տեսագրության մեջ երևում է, որ քաղաքացուն բերման ենթարկողներից մեկը [քաղաքացիական հագուստով է](#), իսկ ոստիկանական համազգեստով անձը կոպիտ և արհամարհական է խոսում իրենց նկարող ՀՀ քաղաքացու հետ, հարվածում ու հրում նրան:

Քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումն արձանագրվել է նաև [ՄԻՊ կողմից](#):

Արանագրվել են նաև հավաքի վայրում առանց տարբերանշանի ոստիկանության ծառայողների ներկայության դեպքեր: Օր.՝ 2022 թ. **մայիսի 2-ին** Երևանի Բաղրամյան պողոտայում ոստիկանության ծառայողը, որը պահանջում էր Արսեն Բաբայանից կատարել իր օրինական պահանջը, բացել ճանապարհը և որն այնուհետև Արսեն Բաբայանին բերման ենթարկողներից էր, [չունեի իր անձը նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշան](#):



Աղբյուրը՝ 168.am

ԴԻՄԱԿԱՎՈՐՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԵՐՋՐԱՎՈՒՄԸ ՀԱՎԱՔՆԵՐԻ ԸՆԹԱՅՔՈՒՄ

2020 թ.-ից ոստիկանական համակարգում «ներդրվեց» [սևազգեստ դիմակավորված անձանց ներգրավման](#) պրակտիկան, որոնք ցուցարարներին բերման են ենթարկում, նրանց նկատմամբ բռնի ուժ կիրառում: 2022 թ.ցույցերի առաջին իսկ օրվանից ցույցերի վայրերում էին «POLICE» գրությամբ դիմակավորված, առանց նույնականացման հնարավորության անձինք:



Աղբյուրը՝ 168.am

2022 թ. **սեպտեմբերի 14-ին** ԱԺ շենքի մոտ հավաքված էին զոհված զինծառայողների ծնողներ, հասարակական-քաղաքական գործիչներ. նրանք պահանջում էին վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականը: Նրանց թվում էր նաև Էդգար Ղազարյանը: Տեսագրությունում երևում է, թե ինչպես համազգեստով մի խումբ անձինք՝ [դիմակավորված առանց տարբերանշանի](#), Էդգար Ղազարյանին նստեցրին Ոստիկանության մեքենան և հեռացան: Առանց ներկայանալու, ազատությունից զրկելու հիմքերը ներկայացնելու անձին մեքենայի մեջ նստեցնելու դիմակավորված անձանց գործողություններն առևանգում էին հիշեցնում: Դիմակավորված անձանց ներգրավելու խնդրին [անդրադարձել է նաև ՄԻՊ-ը](#):

Նշենք, որ սա թերևս հետհեղափոխական Հայաստանում դարձել է օրինաչափություն, մինչդեռ անընդունելի է առանց տարբերանշանի ոստիկանության ծառայողների ծառայության իրականացումը և առավել ևս քաղաքացիական հագուստով և դիմակավորված անձանց գտնվելը հավաքների իրականացման վայրում, որը հանդիսանում է օրենքի խախտում:

Հիշեցնենք, որ համաձայն [«Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի](#)՝ հասարակական կարգի պահպանությունն ապահովելիս ոստիկանության ծառայողները պարտավոր են **կրել սահմանված ձևի համազգեստ, որի վրա տեսանելի մասում փակցվում են ոստիկանության ծառայողին անձնապես նույնականացնելու հնարավորություն տվող տարբերանշաններ**: Անընդունելի է որպես ոստիկան հանդես եկողների տարբերանշաններ չկրելը: Առհասարակ հրապարակային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանմանը քաղաքացիական հագուստով անձանց ներգրավումը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին, որը անխուսափելիորեն մեծացնում է վատ վերաբերմունքի և անպատժելիության ռիսկերը, վախի զգացում է առաջացնում հավաքի մասնակիցների մոտ իրենց կարծիքը հրապարակավ ներկայացնելու տեսակետից:


[ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՏՈՒԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ](#)

2022 թ. **հունիսի 3-ին** մի խումբ ցուցարարներ քայլերթով հասան կառավարական ամառանոց, ապա հայտարարեցին, որ գնում են դեպի ԱԺ, սակայն ոստիկանության ծառայողները խաչընդոտեցին երթը և սկսեցին բերման ենթարկել մասնակիցներին: Ինչպես երևում է տեսագրությունից, ոստիկանության ծառայողները [նոտերով ձեռնում](#), գետնին էին տապալում, վահաններով հարվածում էին մասնակիցներին: Այնուհետև ոստիկանությունը [հատուկ միջոցներ կիրառեց](#), այդ թվում ծխարձակող և լուսաձայնային նռնակներ, ինչի հետևանքով [մարմնական վնասվածքներ ստացան](#) ինչպես քաղաքացիներ, այնպես էլ ոստիկանության ծառայողներ:

Նշենք, որ հատուկ միջոցներ գործադրելու [կարգի համաձայն](#)՝ Ոստիկանության ծառայողը հատուկ միջոցներ գործադրելուց առաջ պարտավոր է նախազգուշացնել դրանք գործադրելու մասին՝ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց գործադրման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ ոստիկանության ծառայողի կյանքին ու առողջությանը, կամ կարող

է առաջացնել այլ ծանր հետևանքներ, կամ երբ տվյալ իրավիճակում այդպիսի նախազգուշացումն անհնար է:

Բացի դրանից՝ [Ոստիկանության մասին օրենքով](#) արգելվում է հատուկ միջոցները գործադրել հղիության նկատելի նշաններով կանանց, **ակնհայտ հաշմանդամների** և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին ու առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի): Իսկ, ինչպես փաստում են դեպքի վայրից լուսանկարները, տարածքում եղել են ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձինք: Այսինք, ոստիկանության ծառայողները կամ չեն ունեցել բավարար և անհրաժեշտ հմտություններ ու կարողություն գնահատելու իրավիճակը կամ անտեսել են օրենքի պահանջը (**ինչպես երևում է նկարում, ակցիայի վայրում ակնհայտ հաշմանդամություն ունեցող անձ կար**):



Աղբյուրը՝ photolure.am

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ոստիկանության ծառայողների կողմից հատուկ միջոց կիրառելու դեպքի կապակցությամբ ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, «Պատիվ ունեն» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանի գրության հիման վրա [հարուցվել է քրեական գործ](#), որն ընթացքում է:

*ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ, ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԸ ԵՎ ԽԱՂԱՂ, ԱՌԱՆՑ ՁԵՆՔԻ ՀԱՎԱՔՆԵՐ ԱՆՑԿԱՅՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ
ԽԱՒՏՈՒՄԸ*

2022 թ. փետրվարի 24-ին Ռուսաստանի Դաշնությունը չհիմնավորված և չիրահրված ագրեսիա սանձազերծեց Ուկրաինայի դեմ: Պատերազմից հետո Ռուսաստանի Դաշնության քաղաքացիները զանգվածաբար հեռանում են երկրից, ինչը հատկապես մեծ թափ ստացավ համընդհանուր մոբիլիզացիա հայտարարելուց հետո: Հայաստանն այն երկրների թվում է, որտեղ նրանք ապաստանում են:

Հաշվետու տարում Հայաստանում ապաստանած Ռուսաստանի Դաշնության քաղաքացիների մասնակցությամբ և/կամ նախաձեռնությամբ մի շարք ակցիաներ կազմակերպվեցին, որոնց միջոցով նրանք արտահայտում էին իրենց անհամաձայնությունն Ուկրաինայի դեմ պատերազմին և Ռուսաստանի Դաշնության վարվող քաղաքականությանը: Այդ ակցիաներն ուղեկցվեցին ոստիկանության ծառայողների՝ ակնհայտորեն ոչ իրավաչափ վարքագծով:

Մասնավորապես՝ 2022 թ. **մարտի 25-ին** Ռուսաստանի Դաշնության քաղաքացի երկու կանայք՝ [հակապատերազմական պաստառներով պիկետ](#) կազմակերպեցին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մոտ: Ընթացքում նրանց միացան նաև այլ անձինք: Ակցիայի մասնակիցներին ոստիկանության ծառայողները նախ չթույլատրեցին դեսպանատան մոտ ակցիա իրականացնել, ինչից հետո նրանք տեղափոխվեցին դիմացի մայր, սակայն ոստիկանության ծառայողները կրկին մոտեցան նրանց՝ Ազգային անվտանգության ծառայության (ԱԱԾ) աշխատակցի ուղեկցությամբ և ակցիայի մասնակից միակ տղամարդուց պահանջեցին անձնագիր՝ սպառնալով հակառակ դեպքում բերման ենթարկել: Վերցնելով մասնակցի անձնագիրը՝ [ԱԱԾ-ականն այն անմիջապես լուսանկարեց](#): Մասնակցի հարցին, թե ինչու են նկարում անձնագիրը և ինչ են անելու նկարի հետ՝ իրավապահները պատասխանեցին, որ ուղարկելու են Ռուսաստանի Դաշնության դեսպանատուն, որ *«իմանան, որ իրենց քաղաքացին Հայաստանում ակցիաներ կամ նման մի բան է անում»*: Ոստիկանության ծառայողը տեղեկացրեց ակցիայի մասնակիցներին, որ նրանք իրավունք չունեն ակցիա իրականացնելու, քանի որ Հայաստանի քաղաքացի չեն:

Դեպքի արթիվ ՀՔԱ Վանաձորի գրասենյակը մարտի 29-ին [հաղորդում ներկայացրեց](#) ՀՀ գլխավոր դատախազություն: Հաղորդման նյութերն ուսումնասիրեց ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն և քրեական գործ չհարուցեց՝ հանցակազմի բացակայության հիմքով: Մինչդեռ հանցակազմի հատկանիշները պարզելու համար անհրաժեշտ էր հարուցել քրեական գործ և նախաքննությամբ պարզել՝ արդյոք ոստիկանության աշխատակիցները ունեցե՞լ են լիազորություն խոչընդոտելու խաղաղ հավաքի մասնակիցներին իրականացնել իրենց ակցիան, այդ գործողություններում եղե՞լ են լիազորությունների չարաշահման դրսևորումներ, արդյոք Ռուսաստանի Դաշնության դեսպանատան պահակատանը ծառայություն իրականացնող աշխատակիցն *ունեցե՞լ է իրավունք դեսպանատան դիմացի մայրեզրին հավաքված ակցիայի մասնակիցներից պահանջելու անձր հաստատող փաստաթղթեր և լքել հավաքի վայրը, հավաքի*

մասնակիցներին հանցագործություն կատարելու մեջ կասկածելու բավարար և ծանրակշիռ հիմքեր կա՞ն, թե՞ ոչ:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը բողոքարկեց քրեական գործ չհարուցելու [ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի որոշումը](#), ՀՀ գլխավոր դատախազությունը մերժեց բողոքը:

Նշենք, նաև, որ Civic.am-ը գրավոր հարցում ուղարկեց Ոստիկանություն՝ պարզելու համար, թե ինչ որոշում է կայացվել ծառայողական քննության արդյունքում, ինչին ի պատասխան տեղեկացրեցին, որ ոստիկանության կապիտան Վահե Բախշյանը չի պահպանել ոստիկանության ծառայողի էթիկայի կանոնները, սակայն հաշվի առնելով, որ ոստիկանության կապիտան Վ. Բախշյանը ղեկավարության կողմից բնութագրվում է դրական, նմանատիպ կարգապահական խախտում կատարել է առաջին անգամ, անկեղծորեն գղջացել է, նպատակահարմար համարվեց ՀՀ ոստիկանության կապիտանի նկատմամբ [տույժ չկիրառել](#):

2022 թ. **օգոստոսի 24-ին** Ազատության հրապարակում տասնյակ մարդիկ, հիմնականում՝ Ռուսաստանի քաղաքացիներ, հակապատերազմական ակցիա կազմակերպեցին: Ակցիայի առաջին իսկ րոպեներից կազմակերպիչները [բերման ենթարկվեցին](#): Այնուհետև ոստիկանության ծառայողները սկսեցին բերման ենթարկել նաև մյուս մասնակիցներին՝ «ազգամիջյան թշնամանք հրահրելու» պատճառաբանությամբ: «Полгода Безумия» պաստառը, օրինակ, ոստիկանը գնահատեց որպես «ազգամիջյան թշնամանք հրահրող»: Բերման ենթարկվեց 22 մասնակից, այդ թվում լրագրողներ:

Բոլորը նույն օրը՝ ժամը 22:00-ի դրությամբ, ազատ արձակվեցին, արձանագրություններ չկազմվեցին: Ոստիկանությունը նրանց միայն մի թուղթ տվեց, որում գրված է բերման ենթարկելու պատճառը. ՀՀ Օրենսգրքի 182-րդ հոդված՝ «Ոստիկանության ծառայողի օրինական պահանջը չկատարելու համար»:

2022 թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեյջանը [գինված հարձակում ձեռնարկեց](#) Հայաստանի դեմ Գորիսի, Սոթքի և Ջերմուկի ուղղությամբ: Դրանից հետո՝ 2022 թ. **սեպտեմբերի 16-ին**, Հայաստանի մի քանի քաղաքացիներ հավաքվեցին Երևանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մոտ՝ արտահայտելու իրենց բողոքն Հայաստանի նկատմամբ հարձակման դեպքով Ռուսաստանի անտարբերության և չեզոքության կապակցությամբ: Երբ ակցիայի մասնակիցները բացեցին «ОДКБ, есть кто дома??? Или все пошли бухать с Эрдоган(дон)ом???» և «Путин вон из класса» պաստառները, ոստիկանները անմիջապես մոտեցան և հորդորեցին լքել տարածքը՝ պատճառաբանությամբ, որ պետք է ապահովեն դեսպանատան անվտանգությունը:

Այնուհետև շուրջ 2 տասնյակ կարմիր բերետավորներ, ուժ կիրառելով, իսկ մեկը հայիռելով, [բերման ենթարկեցին](#) պաստառները բացած ցուցարարներին և ևս մեկ հոգու, ով պարզապես կանգնած էր: Կարմիր բերետավորներից մեկը ակցիայի մասնակցին ասաց. [«գլուխդ կջարդեմ այ ֆունտիկ»](#):

Արձանագրենք, որ խաղաղ հավաքներ անցկացնելու իրավունքը Հայաստանում չպետք է սահմանափակվի և չպետք է պայմանավորվի ազգային պատկանելիությամբ կամ քաղաքացիությամբ: Նշենք նաև, որ ապրիլի 9-ին Ռուսաստանի Դաշնության մի խումբ քաղաքացիներ [հակապատերազմական ակցիա](#) կազմակերպեցին Երևանում Ռուսաստանի

Դաշնության դեսպանատան մոտ՝ դեսպանատան մայրին, որը չխոչընդոտվեց ոստիկանության կողմից:

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՌՏՈՒՄՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆՆԵՐՈՒՄ

2022 թ. ապրիլի 25-ից հունիսի 3-ը ՄԻՊ կողմից պարբերաբար հայտարարություններ տարածվեցին, որոնք ներկայացնում էին ՄԻՊ աշխատակազմի արագ արձագանքման խմբերի՝ ոստիկանության բաժիններ այցերի ժամանակ արձանագրված խնդիրները: Ստորև ներկայացնում ենք բաժիններում առավել հաճախ արձանագրված ընթացակարգային խախտումները.

- անձին բերման ենթարկելիս ոստիկանության ծառայողների կողմից չի ներկայացվել որևէ պահանջ
- անձանց չեն ներկայացվել ազատությունից զրկելու հիմքերն ու պատճառները
- անձանց չեն պարզաբանվել նրանց նվազագույն իրավունքները (փաստաբան ունենալու, լռելու, հեռախոսազանգի և այլ իրավունքներ)
- խոչընդոտվել է հեռախոսազանգ կատարելու իրավունքը
- գրանցամատյանները լրացվել են խախտումներով, թերի (օր.՝ չի լրացվել անձին ազատ արձակելու ժամը, վարչական ձերբակալման ենթարկված անձանց չեն գրանցել այն հիմնավորմամբ, որ վերջիններս չեն ներկայացել և իրենց վերաբերյալ տվյալներ չեն ներկայացրել ոստիկանության ծառայողներին, բերման ենթարկելու և բաժնից դուրս գալու սխալ ժամի լրացման դեպք)
- անկախ վարչական վարույթի շրջանակում իրականացվող գործողությունների ավարտից՝ անձինք պահվել են Ոստիկանության բաժիններում մինչև լրանա օրենքով սահմանված 3 ժամը
- բերման ենթարկված անձանց ազատ չեն արձակել անգամ վարչական ձերբակալման համար նախատեսված առավելագույն ժամկետի՝ 3 ժամի լրանալուց հետո
- անձանց՝ իրենց կամքին հակառակ՝ նույնականացնում էին էլեկտրոնային սարքերով: Ավելին՝ քաղաքացու անձնական բջջային հեռախոսով մուտք են գործել վերջինիս վայրեր անձնական հաշիվ, իմացել նրա անունը, այնուհետև նույն հեռախոսով, ֆեյսբուք սոցիալական ցանց իր էջով պարզել վերջինիս անունը, ազգանունը և նման ապօրինի եղանակով նույնականացրել անձին, ստացել անձնական տվյալների հասանելիություն
- քաղաքացիական հագուստով ոստիկանության ծառայողները բջջային հեռախոսով լուսանկարել են անձանց ոստիկանության բաժին մտցնելիս, ընդ որում, առանց որևէ տարանջատման, այդ թվում՝ անչափահասներին
- անձի լռելու իրավունքից օգտվելու դեպքում ոստիկանության ծառայողների կողմից հնչել է սպառնալիք ոստիկանության բաժնում ավելի քան 24 ժամ պահելու կամ քրեական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

- ոստիկանության բաժիններում վարչական ձերբակալման ենթարկված անձանց պարտադրել են անջատել հեռախոսները
- վարչական ձերբակալման ենթարկված օտարերկացիները չեն տեղեկացվել նվազագույն իրավունքների մասին իրենց հասկանալի լեզվով (իրավունքների վերաբերյալ ձևաթուղթը տրամադրվել է հայերեն, այն պայմաններում, երբ նրանք չեն տիրապետում լեզվին):
- բաժին բերված քաղաքացին եղել է առանց կոշիկների
- խոչընդոտվել է փաստաբանի մուտքը ոստիկանության բաժին
- Ոստիկանության ծառայողները փորձում էին անհիմն անազատության մեջ պահել անձի փաստաբանին և որպես պատճառ նշվում էր փաստաբանի կողմից կատարված տեսաձայնագրումը:

Նշենք, որ այս խախտումների մի մասը հանցագործություններ են, ինչպես, օրինակ, փաստաբանին անազատության մեջ պահելը, անձին սպառնալը կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողություններից տուժել են նաև լրագրողները:

2022 թ.-ին լրագրողների՝ մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտվել է 13 դեպքում (12 դեպք արձանագրվել է հավաքների ընթացքում և մեկ դեպքը «Եռաբլուր» զինվորական պանթեոնում, որտեղ ոստիկանության ծառայողները բռնի ուժի գործադրմամբ քաշքշելով բերման էին ենթարկում զոհված զինծառայողների ծնողներին):

Ոստիկանության ծառայողներն անհարգալից ու [սպառնալիքներով էին խոսում](#) լրագրողների հետ, հարվածում ու [գցում էին գետնին](#): Մեկ դեպքում լրագրողը նույնիսկ բերման ենթարկվեց ակցիան լուսաբանելիս, և նրա դեմ, ի թիվս այլ քաղաքացիների, քրեական գործ հարուցվեց հասարակական կարգը կոպիտ խախտելու հատկանիշներով: Ակցիան տեղի էր ունեցել 2022 թ. [փետրվարի 22-ին](#): [Ադրբեջանցի երկու պատգամավորներ](#) Երևանում մասնակցում էին [«Եվրանեսթ» խորհրդարանական վեհաժողովի նիստերին](#): Դաշնակցության երիտասարդական միության մի խումբ անդամներ կոչերով ու պաստառներով ադրբեջանցի պատգամավորներից պահանջում էին վերադարձնել հայ ռազմագերիներին և հեռանալ հայկական տարածքներից: Ոստիկանները նրանց բերման ենթարկեցին: Ակցիայի վայրում էր նաև [«Երկիր Մեդիա» հեռուստաընկերության լրագրող Անի Նահապետյանը](#), որին նույնպես ոստիկանություն տարան:

Լրագրողների մասնագիտական գործունեությունը բռնի ուժի գործադրմամբ զանգվածաբար խոչընդոտվեց 2022 թ. [մայիսի 2-ի](#) ընդդիմության բողոքի ակցիաների ընթացքում: [Մասնավորապես՝](#)

- Քաղաքացիների հետ բախման ընթացքում գիտակցությունը կորցրեց Yerkir.am-ի լրագրող Լիա Սարգսյանը:
- Հերացի փողոցի վրա սև դիմակավորները հրեցին AntiFake.am-ի լրագրող Դավիթ Ֆիդանյանին ու հարվածեցին ուսին՝ խոչընդոտելով նկարահանումը:
- Խանջյան փողոցում ոստիկանները հրմշտեցին ու խոչընդոտեցին նկարահանման աշխատանքը:
- Խանջյան և Սայաթ-Նովա փողոցներում քաշքշեցին AntiFake.am-ի լրագրող Իշխան Խոսրովյանին, խոչընդոտեցին նկարահանումը:
- Բաղրամյան-Պոռչյան փողոցների խաչմերուկում mediahub.am-ի և այլ լրագրողների նկատմամբ բիրտ ուժ կիրառեց Պետական պահպանության ծառայության՝ ՊՊԾ պետ Սարգիս Հովհաննիսյանը՝ հարվածելով իրեն հարց ուղղող լրագրողին և նրան նկարահանող օպերատորին, այդ թվում՝ վնաս պատճառելով վերջինիս տեսախցիկին:

Վերջին դեպքն ուսումնասիրվեց ՀՀ Քննչական կոմիտեում և որոշում կայացվեց [քրեական գործ հարուցելը՝ հանցակազմի բացակայության հիմքով մերժելու մասին](#)՝ Սարգիս Հովհաննիսյանի գործողություններն արդարացնելով հեռախոսային խոսակցությունների գաղտնիության և անձնական տվյալների պաշտպանության սահմանադրական իրավունքով: Նշվեց, որ լրագրողը պետք է դադարեցներ նկարահանումը նման պահանջ ստանալուց հետո:

Հարկ ենք համարում հիշեցնել իրավապահ համակարգի ներկայացուցիչներին և մասնավորապես ՊՊԾ պետ Սարգիս Հովհաննիսյանին և ՀՀ քննչական կոմիտեին, որ լրագրողի մասնագիտական օրինական գործունեությունը խոչընդոտելն [արգելված է օրենքով](#): Ավելին, ՊՊԾ պետը գտնվում էր հավաքի վայրում, լրագրողի հարցն էլ անձնական բնույթի չէր, այլ վերաբերում էր ընթացող հավաքին, իսկ պետական մարմինների ծառայողների անհարգալից վերաբերմունքը, բռնությունը քաղաքացիների, ինչպես նաև լրագրողների նկատմամբ, օրենքով ենթակա է պատասխանատվության:



Աղբյուրը՝ [aravot.am](#)

Մայիսի 6-ին լուսանկարում պատկերված ծառայողը [խոչընդոտեց Aravot.am-ի լրագրողի աշխատանքը](#)՝ հարվածելով ֆոտոխցիկին և պահանջելով չնկարել իրեն:

Լրագրողների աշխատանքը խոչընդոտվեց նաև սեպտեմբերի 21-ին «Շոաբլուր» զինվորական պանթեոնում, որտեղ ոստիկանության ծառայողները բռնի ուժի գործադրմամբ քաշքշելով բերման էին ենթարկում զոհված զինծառայողների ծնողներին և հարազատներին: Լրագրողներին հրելով տարածքից հեռացրին՝ արգելելով տեսանկարահանել ու լուսանկարել:

[News.am](#). «Հատուկ միջոցառում է: Այո, պետական պահպանության ծառայությունն է. ես ձեզ հրավիրում եմ ներքեւ», -ասաց քաղաքացիական հագուստով տղամարդը:

Լրագրողների ու ԶԼՄ-ների իրավունքների խախտումները, այդ թվում լրագրողների նկատմամբ ոստիկանության ծառայողների կողմից ֆիզիկական ուժի կիրառման դեպքերն ու դրա հետևանքները ներկայացվել են նաև Խոսքի ազատության պաշտպանության կոմիտեի կողմից՝ [2022թ. տարեկան զեկույցում](#):

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՅԼ ԽԱՆՏՈՒՄՆԵՐ

2022 թ.-ին արձանագրվել են նաև քաղաքացիների սեփականության իրավունքի խախտման դեպքեր: Մասնավորապես, ոստիկանության ծառայողների կողմից ավտոերթի մասնակից անձանց տրանսպորտային միջոցները տարվել են հատուկ պահպանվող տարածք և վերջիններիս չեն վերադարձվել: Ընդ որում, շուրջ վեց տրանսպորտային միջոցի մասով դրանք չեն վերադարձվել մի քանի օր և մեքենաների սեփականատերերին [չի ներկայացվել այն հիմնավոր պատճառաբանությունը](#), որով դրանք պահվում են հատուկ պահպանվող տարածքում:

Մեկ այլ դեպքում 2022 թ. **ապրիլի 26-ին** երիտասարդները երևանյան բուհերում իրազեկման ակցիաներ են իրականացրել՝ կոչ անելով միանալ հանուն Արցախի ու հանուն Հայաստանի իրենց պայքարին: Հասնելով կառավարության շենքի մոտ՝ նրանք աստիճանների վրա դրեցին փաթեթ առաջին անհրաժեշտությամբ պարագաներով Ն. Փաշինյանի համար, ինչից հետո նրանց ոստիկանները քաշքշելով [բերման ենթարկեցին](#): Հատկանշական է, որ **ապրիլի 27-ին** ՀՀ արտաքին գործերի նախարարության շենքի դիմաց բողոքի ակցիա իրականացնող և շենքի աստիճանների վրա արյունոտ ձեռքերով [շապիկներ դնող](#) երիտասարդներից որևէ մեկը բերման չենթարկվեց:

Ըստ այդմ, կարող ենք եզրակացնել, որ կամ ոստիկանության ծառայողների գործողությունները կամայական են, կամ պայմանավորված են ոչ թե օրենքի պահանջով, այլ քաղաքական հրահանգով, ինչը հակասում է ոստիկանության գործողությունների կանխատեսելիության և որոշակիության պահանջներին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԿՁԲՈՒՆՔԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Մտահոգիչ է իրավապահ համակարգում ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ, հակաօրինական գործողությունների նկատմամբ վերաբերմունքը, ինչպես նաև այդ դեպքերով քննությունների թափանցիկության ու հաշվետվողականության բացակայությունը:

Առաջինը՝ 2020 թ.-ից Հատուկ քննչական ծառայության կայքում կտրուկ կրճատվեց ոստիկանության ծառայողների կողմից բռնություն կիրառելու և խոշտանգման ենթադրյալ դեպքերի վերաբերյալ հրապարակումների թիվը, ինչին անդրադարձել ենք մեր [2020](#) և [2021](#) թթ. զեկույցներում: Մասնավորապես, 2020 թ. միայն մեկ հրապարակում էր վերաբերում ոստիկանության ծառայողների կողմից խոշտանգման ենթադրյալ դեպքին, մինչդեռ 2020 թ. միայն **2 ամսվա ընթացքում** ոստիկանության աշխատակիցների կողմից արժանապատվությունը

նվաստացնելու, ֆիզիկական և հոգեբանական բռնությունների, խոշտանգման դեպքերով ՀՔԱ Վանաձորի գրասենյակին էր դիմել [8 քաղաքացի](#):

Երկրորդը՝ 2021 թ.-ին ՀՔԱ Վանաձորի գրասենյակին [անդրադարձավ](#) Լոռու մարզի Մարց գյուղում ոստիկանության ծառայողների ապօրինություններին և բռնություններին, [հանցագործության մասին հաղորդում ներկայացրեց](#): 2022 թ.-ին կազմակերպությունը շարունակեց զբաղվել այդ գործով, սակայն [առաջընթաց չկա](#), ոստիկանական անպատճելիությունը ՀՀ-ում դեռևս չի հաղթահարվել. խոշտանգում եղել է, բայց խոշտանգողին ԱԱԾ-ն չի գտնում:

ԶԼՄ մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի արձանագրած դեպքերը ցույց են տալիս, որ անձանց ֆիզիկական բռնության ենթարկելու և արժանապատվությունը նվաստացնելու պրակտիկան շարունակական բնույթ է կրում: Ավելին, ոստիկանության ծառայողների բացահայտ ահաբեկող, վախի մթնոլորտ ստեղծող ակնհայտ ապօրինի գործողությունների կիրառումը չի վերացել, չնայած հակառակի մասին հավաստիացումներին: Ոստիկանության ծառայողների կողմից ոչ իրավաչափ գործողությունները հետևողականորեն պատշաճ արձագանք չեն ստանում, չեն քննվում կամ թողնվում են անհետևանք:

2022 թ. մարտի 25-ին Հայաստանում Ռուսաստանի Դաշնության դեսպանատան մոտ խաղաղ ակցիայի մասնակիցներին ոստիկանության ծառայողների ոչ իրավաչափ գործողությունների դեպքով ՀՀ գլխավոր դատախազություն դիմելուց բացի [ՀՔԱ Վանաձորի գրասենյակը հանցագործության մասին 9 հաղորդում ներկայացրեց](#) 2022 թ. ապրիլի 25-ից ՀՀ-ում մեկնարկած անհնազանդության ակցիաների ընթացքում ցուցարարների և լրագրողների նկատմամբ ոստիկանության բռնությունների մասին: Հաղորդումների հիման վրա 2 քրեական գործ հարուցվեց:

Կազմակերպությունը նաև ԶԼՄ 98 հրապարակումներում, ինչպես նաև ՄԻՊ հրապարակումներում արձանագրված խախտումների քննության ընթացքի վերաբերյալ հարցում ուղարկեց ՀՀ ոստիկանություն:

Ի պատասխան ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունից 2022 թ. դեկտեմբերի 29-ին տրամադրեցին 26 հրապարակման վերաբերյալ տեղեկություն (ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանն ամբողջությամբ տե՛ս [Հավելվածում](#)), որոնցից միայն մեկի դեպքում է ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվել կարգապահական տույժ «Նկատողություն» ձևով: Ընդ որում, պատասխանում նշված է, որ ոստիկանության ծառայողի ոչ արհեստավարժ գործելու արդյունքում **տպավորություն է ստեղծվել**, որ ծառայողը կոպտորեն հրել է երիտասարդ աղջկան: Նշենք, որ խոսքը [տեսանյութի](#) մասին է, որում հստակ երևում է ոստիկանության ծառայողը ոչ միայն հրում է երիտասարդ աղջկան, այլև հետո հարվածում և քաշում է մազերից:

Հրապարակումներից

- 19-ի դեպքում ծառայողական քննությունը կասեցվել է մինչև քրեական վարույթի ավարտը:

- Մեկ դեպքում պարեկային ծառայողի նկատմամբ տույժ չի կիրառվել «ՀՀ ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասի հիմքով

Պարեկի կողմից ավտոերթի մասնակցին հայեցելու դեպքով ծառայողական քննության արդյունքում որոշվել է, որ հայեցյալը եղել է վերացական բնույթի, ինչի համար պարեկային ծառայողը պետք է ենթարկվեր կարգապահական պատասխանատվության, սակայն նրա նկատմամբ տույժ չի կիրառվել³:

- Հինգ դեպքով ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել: Այդ դեպքերից են.

➤ [անչափահաս երեխային Աբովյան փողոցում բերման ենթարկելը](#)

Տեսագրությունում երևում է, թե ինչպես են չորս ոստիկան քաշքշելով, բաճկոնը աչքերին բերման ենթարկում անչափահասին, իսկ քաղաքացիներից մեկն էլ նրանց հորդորում է թողնել երեխային:

➤ *կարմիր բերատավորի կողմից ցուցարարի [կոկորդին սեղմելը](#)*

Ընդ որում, ինչպես նշված է պատասխանում, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում՝ նախաքննության արդյունքում որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին՝ հանցանքի բացակայությունը հաստատվելու հիմքով: Համապատասխանաբար նաև ծառայողական քննությամբ չեն հայտնաբերվել կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ: Ավելին, ինչպես հաղորդում է [hraparak.am-ը](#), այդ ոստիկանի պաշտոնը բարձրացրել են:

➤ *Գյումրիում քաղաքացու աչքերին դեղ լցնելու ու դաժան ծեծի ենթարկելու մասին [հրապարակումը](#)*

Ըստ ՀՀ ոստիկանության պատասխանի՝ ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել:

Հատկանշական է, որ Ոստիկանությունը չի հերքում քաղաքացու աչքերին դեղ լցնելու ու դաժան ծեծի ենթարկելու հանգամանքը, այլ, ըստ պատասխանի, այդ արարքում խախտման հատկանիշներ չի տեսնում:

- Մյուս 72 հրապարակումների վերաբերյալ իրականացվում են ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար:

[Փաստինֆոն](#) նույնպես հարցում էր ուղարկել Դատախազություն ոստիկանության և ԱԱԾ ծառայողների կողմից ոչ իրավաչափ գործողությունների վերաբերյալ: 2022 թ. հունիսի 8-ի դրությամբ հարուցված էր 39 քրեական գործ, սակայն 2022 թ. սեպտեմբերի 23-ի դրությամբ որևէ անձի նկատմամբ քրեական հետապնդում հարուցված չէր:

³ Հոդված 16. Կարգապահական տույժ չկիրառելը՝

1. Ծառայողական քննություն նշանակող անձի որոշմամբ կարգապահական խախտում կատարած ոստիկանության ծառայողը կարող է ազատվել կարգապահական տույժից, եթե նման արարք կատարել է առաջին անգամ, կամ կարգապահական խախտում կատարած ոստիկանության ծառայողն անկեղծորեն զղջացել է, ներողություն է խնդրել կոլեկտիվից կամ տուժողից կամ կամավոր հատուցել է իրավախախտմամբ պատճառված վնասը, հասանելի է հետևյալ հղմամբ՝ <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=164928>

Այսպիսով, ոստիկանության ծառայողների կողմից անհամաչափ ուժի կիրառումը, բռնի և կամայական բերման ենթարկելու գործողություններն ինչպես ակցիաների մասնակիցների, այնպես էլ դրանք լուսաբանող լրագրողների նկատմամբ վկայում են ոստիկանությունում համակարգային խնդիրների շարունակականության մասին, որոնք այդպես էլ լուծում չեն ստանում:


Ոստիկանական համակարգը, չնայած հռչակված բարեփոխման ռազմավարության, փաստացի այդպես էլ արմատական փոփոխության չենթարկվեց, և ծառայողներն այդպես էլ խաղաղ հավաքների ազատության իրավունքի ապահովման հմտություններ ձեռք չբերեցին: Ավելին, ոստիկանության ծառայողների գործողությունները, գլխավորապես պայմանավորված համակարգում անպատժելիության մթնոլորտով, ավելի ու ավելի կամայական ու հակաօրինական բնույթ են ստանում, իսկ իրավապահ համակարգի պարզաբանումներն ու մեկնաբանություններն ուղղված են պաշտոնատար անձանց և ծառայողներին արդարացնելուն, այլ ոչ թե օրենքը և արդարությունը պաշտպանելուն:

2022 թ. ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԽԱՖՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՄՓՈՓՈՒՄ

2022 թ. ընթացքում ՁԼՄ-ների հրապարակումների հիման վրա արձանագրվել է ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման **199 դեպք**: 2021 թ. ընթացքում դեպքերի թիվը **159** էր:

2020 թ. արձանագրվել է ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **192 դեպք**, 2019 թ.՝ **90 դեպք**, 2018 թ.՝ **181 դեպք**, 2017 թ.՝ **107 դեպք**, 2016 թ.՝ **338 դեպք**, 2015 թ.՝ **304 դեպք** (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 2. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման ընդհանուր թիվը ըստ ՁԼՄ-ների հրապարակումների դիտարկման արդյունքների 2015-2022 թթ.



Ինչպես երևում է գծապատկերից, 2022 թ. ընթացքում նախորդ տարվա համեմատությամբ դեպքերի թիվն աճել է **20.1 %-ով** (կամ **40 դեպքով**), իսկ հետհեղափոխական 2019 թ. համեմատությամբ՝ **54.8 %-ով** (կամ **109 դեպքով**):

2022 թ.-ին արձանագրվել է հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման **180 դեպք** կամ դեպքերի **90.5 %-ը**:



2021 թ.-ին արձանագրվել էր 94 դեպք, իսկ հետհեղափոխական 2019 թ.-ին՝ 49 դեպք (*տե՛ս գծապատկեր 3*):

Այսինքն, 2021 թ. համեմատությամբ հավաքների ժամանակ կամ հավաքներին մասնակցելու հետևանքով ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի թիվն աճել է **47.8 %-ով**, իսկ 2019 թ. համեմատությամբ՝ **72.8 %-ով**:


Այսպիսով կարող ենք փաստել, որ 2022 թ. ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը կրկնակի անգամ, իսկ հավաքների ընթացքում խախտման դեպքերը՝ եռակի անգամ գերազանցել են հետհեղափոխական ամենացածր ցուցանիշը:

2022 թ.-ին ՁԼՄ-ներով արձանագրվել է անհատական բյուրթի խախտման **19 դեպք**: 2021 թ. արձանագրվել էր 51, իսկ 2017 թ.-ին՝ 70 դեպք (*տե՛ս գծապատկեր 3*): Նշենք, որ եթե հավաքների ժամանակ ուստիկանության ծառայողների գործողությունները հնարավոր է նույնականացնել ՁԼՄ-ների լայն լուսաբանման շնորհիվ, ապա անհատական բնույթի խախտման դեպքերով լուսաբանումը գրեթե բացակայում է: ՁԼՄ-ներով հրապարակվում են լայն հնչեղություն ստացած դեպքերը:

Գծապատկեր 3. Ուստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերը (հավաքների կամ հավաքներին մասնակցելու արդյունքում արձանագրված իրավունքների խախտման դեպքեր, անհատական դեպքեր և ընտրությունների համատեքստում խախտումների դեպքեր) 2015-2022 թթ.



2022 թ. ընթացքում խախտվել են մարդու հետևյալ 15 իրավունքները (Գծապատկեր 4)



Առավել մեծ թվով խախտվել է խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը (155 դեպք)՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի **78.3 %-ը**: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է 46,5 %-ով (83 դեպք 2021 թ.-ին): Ավելին, 2020 թ.-ից խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտման դեպքերը շեշտակի աճել են, իսկ 2022 թ.-ին խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքի խախտման դեպքերի տոկոսային հարաբերակցությունը խախտման ընդհանուր դեպքերի նկատմամբ ամենաբարձրն է մշտադիտարկվող 8 տարիների ընթացքում:

2020 թ. ընթացքում արձանագրվել է այս իրավունքի խախտման 101 դեպք՝ կազմելով ընդհանուր խախտման դեպքերի 52.6 %-ը, 2019 թ.-ին՝ 29 դեպք (ընդհանուր դեպքերի 32.2 %): 2018 թ.-ին խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունքը խախտվել է 81 դեպքում (ընդհանուր դեպքերի 44.8 %): 2017 թվականին այդ իրավունքը խախտվել էր 17 դեպքում (ընդհանուր դեպքերի 44.8%), 2016 թվականին՝ 121 դեպքում (ընդհանուր դեպքերի 35.8 %), իսկ 2015 թվականին՝ 96 դեպքում (ընդհանուր դեպքերի 31.6 %):

Հաշվետու տարում անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել է 146 դեպքում (ընդհանուր դեպքերի **73.7 %**): Արձանագրվել է այս իրավունքի խախտման 136 դեպք հավաքների ընթացքում, 10 անհատական բնույթի դեպք: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է 41.8 %-ով: 2021 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 85 դեպքում (ընդհանուր դեպքերի 53.5 %): Այսինքն, 2018 թ.-ից հետո անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման դեպքերը կանոնավոր աճում են: Ավելին, այս իրավունքի խախտման տոկոսային հարաբերակցությունը խախտման ընդհանուր դեպքերի նկատմամբ նույնպես ամենաբարձրն է մշտադիտարկվող 8 տարիների ընթացքում:


2020 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 111 դեպքում (ընդհանուր դեպքերի 57.8 %), 2019 թ.-ին՝ 44 դեպքում (ընդհանուր դեպքերի 48.8 %), 2018 թ.-ին 76 դեպքում (ընդհանուր դեպքերի 42 %): 2017 թ.-ին գրանցվել է այդ իրավունքի խախտման 16 դեպք (ընդհանուր դեպքերի 15 %-ը): 2016 թ.-ին անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը խախտվել էր 157 դեպքում (ընդհանուր դեպքերի 46.4 %-ը), իսկ 2015 թ.-ին՝ 70 դեպքում (ընդհանուր դեպքերի 23 %-ը):

Առավել հաճախ խախտվել է նաև ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը՝ 124 դեպք (ընդհանուր դեպքերի 62.6 %): Այս իրավունքի տոկոսային հարաբերակցությունը նույնպես ընդհանուր դեպքերի նկատմամբ ամենաբարձրն է մշտադիտարկվող 8 տարիների ընթացքում:

2021 թ.-ին արձանագրվել է այդ իրավունքի խախտման 68 դեպք (ընդհանուր դեպքերի 42.8 %), 2020 թ.-ին՝ 84 դեպք (ընդհանուր դեպքերի 43.8 %), 2019 թ.-ին՝ 41 դեպք (ընդհանուր դեպքերի 45.5 %): 2018 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 84 դեպքում (ընդհանուր խախտման դեպքերի 46.4%), 2017 թ.-ին՝ 62 դեպքում (49.1 %): 2016 թ.-ին ֆիզիկական բռնությունից զերծ մնալու իրավունքը խախտվել էր 141 դեպքում (ընդհանուր դեպքերի 41.7 %-ը), իսկ 2015 թ.-ին՝ 37 դեպքում (ընդհանուր դեպքերի 12.2 %-ը):


2022 թ.-ին կրկնապատկվել են առողջության իրավունքի խախտման դեպքերը՝ արձանագրելով վատագույն արդյունքը 8 տարիների ընթացքում (տե՛ս գծապատկեր 5):

Գծապատկեր 5. Ոստիկանության ծառայողների կողմից առողջության իրավունքի խախտման դեպքերի թիվը 2016-2022 թթ.-ին



Դեպքերի գերակշիռ մասը, ավանդաբար, գրանցվել է Երևանում (183 դեպք, ընդհանուր դեպքերի 92.4 %-ը):

Գծապատկեր 6. Ոստիկանության ծառայողների կողմից մարդու իրավունքների խախտումները Երևանում և մարզերում



Հավելված. ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պատասխանը



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՆԵՐՔԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան, Նալբանդյան 57, հեռ. (ֆաքս) 011.52-93-38

«ԳՐ» 12. 2022 թ.

N° 28.5.560

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ կազմակերպության
նախագահ

Արթուր Սաքունցին

info@hcav.am

Հարգելի՛ պարոն Սաքունց,

Ի լրումն ՀՀ ոստիկանության ներքին անվտանգության վարչության 2022թ. դեկտեմբերի 2-ի թիվ 28/717 գրությանը՝ տեղեկացնում եմ, որ զանգվածային լրատվության միջոցների նշված հրապարակումների կապակցությամբ ՀՀ ոստիկանությունում իրականացվել են ծառայողական քննություններ և ծառայողական ուսումնասիրություններ:

Մասնավորապես.

- <<Ոստիկանը բռնցքով մի քանի անգամ հարվածում է քաղաքացու գլխին>> վերտառությամբ հոդվածի /<https://www.aravot.am/2022/05/02/1264777/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Կարմիր բերետավորը հարվածեց ակցիայի մասնակցող կնոջը>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/700468.html/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանը թքում է քաղաքացու վրա. Թագուհի Թովմասյանն արձագանքում է խայտառակ տեսանյութին>> վերտառությամբ հոդվածի /<https://iravunk.com/?p=226488&l=am/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանները փորձում են բերման ենթարկել Արծվիկ Մինասյանին>> վերտառությամբ տեսանյութի /<https://www.youtube.com/watch?v=qon-5ggVITQ/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ակցիա մասնակցի ինքնազգացողությունը վատացավ>> վերտառությամբ տեսանյութի /<https://a1plus.am/hy/article/431859/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Կարմիր բերետավորը բիրտ ուժ է կիրառում պատգամավոր Արամ Վարդևանյանի նկատմամբ՝ սեղմելով պարանոցը>> (ֆոտո) վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/704629.html>, <https://www.facebook.com/hayastandashinq/posts/pfbid024epaJBicu4kLRY6iaFZkujBCDPgB1Ag8jSKWWzkeFMJYwzpPA9Rjhw7rwxJik1RY/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանները գետնին են տապալում քաղաքացիներին>> վերտառությամբ տեսանյութի /<https://www.facebook.com/watch/?v=561279402316916/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ ոստիկանության ծառայողը գործել է ոչ արհեստավարժ, ինչի արդյունքում տապալորություն է ստեղծվել, որ նա տվյալ երիտասարդ աղջկան կոպտորեն հրել:

Վերոգրյալի կապակցությամբ ոստիկանության մեկ ծառայողի հայտարարվել է <<նկատողություն>>:

- <<Ոստիկանը ոտքով հարվածում է քաղաքացու դեմքին>> (տեսանյութ) վերտառությամբ հոդվածի /<https://factor.am/518955.html/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Բախում կառավարական ամառանոցի մոտ. Ոստիկանները քաշքշեցին ԱԺ պատգամավորներին, քաղաքացիներին, պառկեցրին գետնին ու բերման ենթարկեցին>> վերտառությամբ հոդվածի /<https://www.aravot.am/2022/06/03/1272179/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանը դաժանաբար ծեծում է ցուցարարին և անօգնական թողնում գետնին ընկած>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/705596.html/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանը երկու անգամ թիկունքից հարվածում է բերման ենթարկվող քաղաքացու գլխին. Փաստաբանը տեսանյութ է հրապարակել>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/705758.html/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Եռաբլուրում բերման են ենթարկել զոհված զինծառայողների հարազատներին>> վերտառությամբ հոդվածի /<https://epress.am/2022/09/21/dead-soldiers-relatives-arrested.html>, <https://www.facebook.com/watch/?v=620240579771952>, <https://www.facebook.com/watch/?v=1113010816253016/> կապակցությամբ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Հարուցվել է քրգործ ադրբեջանցի պատգամավորների այցի դեմ ակցիա իրականացրած 25 քաղաքացու, այդ թվում՝ լրագրողի նկատմամբ>> վերտառությամբ հոդվածի /<https://www.azatutyun.am/a/31718876.html>/ կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանները կոտրել են ՀՅԴ ԳՄ անդամ Ս.Մանուկյանի կողոսկրը. Yerkir.am>> վերտառությամբ հոդվածի /<https://www.mediahub.am/post6fd96a0b297de61e/81303b5a971f3c4e/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Անչափահաս երեխա է.>> Լարված իրավիճակ է Աբովյան փողոցում. Ոստիկանները ուժով բերման են ենթարկում երթի մասնակիցներին>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/700191.html>/ կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք:

- <<Ոստիկանը շիշ է նետում <<Դիմադրության>> շարժման մասնակիցների վրա>> վերտառությամբ հոդվածի /<https://www.youtube.com/watch?v=dGhdkV0Hisg/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ազատամարտիկ Գեորգի Արիստակեսյանը, ում ոստիկանը <<Դ*բաննի բիճա>> անվանեց, կամավոր մասնակցել է բոլոր պատերազմներին>> վերտառությամբ տեսագրության /<https://www.youtube.com/watch?v=X-WZ51lc7kc/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Մի ծփեք, մի արեք>>. ոստիկանության Նոր Նորքի բաժնի մոտ քաշքշում ու գետնին են տապալում բերման ենթարկվածներին>> (վիդեո) վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/702208.html>/ կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք:

- <<Լուսանկարի ոստիկանը բոլորի աչքի առաջ կոտրել է քաղաքացի Մհեր Ստեփանյանի ձեռքը. Մակինյան>> (\$ոտո) վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/702207.html>/ կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<77-ամյա կինը պնդում է՝ ոստիկաններն են իրեն հրել, գետնին գցել, որի ժամանակ էլ թևը կտրել է>> վերտառությամբ հոդվածի /<https://www.azatutyun.am/a/31856394.html/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանները բերման են ենթարկում մետրոյում ակցիա իրականացնողներին>> (տեսանյութ) վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/703308.html/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Ոստիկանը ծխախոտի մնացորդը մեքենայից գցել է, իսկ նկատողություն արած քաղաքացուն հորդորել խոտի վրա չքայլել>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/717416.html/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք:

- <<Ոստիկանը մատը աչքս մտցրեց, արյուն եկավ. Ինչպես է ցուցարարն աչքի վնասվածք ստացել>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/702577.html/> կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացվող ծառայողական քննության ընթացքը կասեցվել և որոշվել է դրան անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթի վերջնական արդյունքներով:

- <<Հրապարակ. Յուգարարին խեղդող ոստիկանի պաշտոնը բարձրացրել են>> վերտառությամբ հոդվածի՝ /<https://hraparak.am/post/4b8c5b7cfbe1deae62ee0122ecac1db4/> նույն փաստի կապակցությամբ ֆեյսբուքյան կայքի օգտատեր Արմեն Գրիգորյանը 2022թ. մայիսի 18-ին <<Սա Հայաստանն է: Կարմիր գլխարկն էլ է հայ, խեղդամահ լինողն էլ: Նման վիդեոներ, որտեղ հայ տղաների թևերը մեջքի հետևը կապած խեղդում, դանակով քերթում կամ այլ վայրագություններ էին անում, տեսել եմ միայն վերջին արցախյան պատերազմի օրերին: Ու էս կարմիր գլխարկներն ու սրանց պաշտպանողները հայ են, կամ մարդ են>> վերտառությամբ տեսանյութ է հրապարկել /<https://www.facebook.com/100023381282923/posts/1137854897003876/?d=n/>:

Փաստի առթիվ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում 2022թ. հունիսի 2-ին ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով նախաձեռնված թիվ 62225122 քրեական վարույթով ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում կատարվել է նախաքննություն, որտեղ 2022թ. սեպտեմբերի 2-ին որոշում է կայացվել քրեական վարույթը կարճելու մասին՝ հանցանքի բացակայությունը հաստատվելու հիմքով:

Վերոգրյալի կապակցությամբ ոստիկանության Երևան քաղաքի վարչությունում իրականացված ծառայողական քննությամբ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, ուստի ծառայողական քննության արդյունքները թողնվել են անհետևանք:

- <<Պարեկը հայիոյանքով է խոսում ավտոերթի մասնակցի մասին>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/703388.html/> կապակցությամբ ոստիկանության պարեկային ծառայությունում իրականացված ծառայողական քննությամբ պարզվել է, որ պարեկային ծառայողը ծառայության ընթացքում հնչեցրել է վերացական բնույթի հայիոյանք, ինչի համար ենթակա է եղել կարգապահական

պատասխանատվության, սակայն ղեկավարվելով <<<< ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով, նրա նկատմամբ կարգապահական տույժ չի կիրառվել:

- <<Պարեկները հատուկ միջոց են կիրառել քաղաքացու նկատմամբ, դեղ լցրել աչքերին, հետո սկսել են դաժանորեն ծեծել. Իրավապաշտպան>> վերտառությամբ հոդվածի /<https://news.am/arm/news/717699.html/> կապակցությամբ ոստիկանության պարեկային ծառայությունում իրականացված ծառայողական ուսումնասիրությամբ ոստիկանության ծառայողների արարքներում կարգապահական բնույթի խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել, ուստի ծառայողական ուսումնասիրության արդյունքները թողնվել են անհետևանք:


Բացի այդ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում ստացվել են գրություններ՝ 2022թ. ապրիլի 26-ից մինչև 2022թ. հունիսի 10-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում տեղի ունեցած բողոքի ակցիաների և ոստիկանության ծառայողների գործողությունների վերաբերյալ, որոնց կապակցությամբ իրականացվող թվով 2 ծառայողական քննությունների ընթացքները կասեցվել և որոշվել են դրանց անդրադառնալ նախաձեռնված քրեական վարույթների վերջնական արդյունքներով, իսկ թվով 1 ծառայողական ուսումնասիրության ընթացքը շարունակվում է:

Միաժամանակ տեղեկացնում են, որ Ձեր գրությունում նշված մյուս հրապարակումների վերաբերյալ ոստիկանության ներքին անվտանգության վարչությունում իրականացվում են ուսումնասիրություններ՝ ծառայողական քննության հարցը լուծելու համար, իսկ ոստիկանության ծառայողների անհատական տվյալները հնարավոր չէ տրամադրել՝ հիմք ընդունելով <<Տեղեկատվության ազատության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածով և <<<< աշխատանքային օրենսգրքի>> 134-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումները:

Հարգանքով՝

**Պետ,
ոստիկանության գնդապետ՝**

կադ. Ա. Շահինյան
հեռ. 010-59-63-36



Վ. Մարտիրոսյան